



## ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

### ՀՐԱՄԱՆ

«13» հունվարի 2015թ.

N 01-Ն

ք. Ս տ ե փ ա ն ա կ ե ր տ

**ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՍԵՎ ՑԵԼԻ ՏԱԿ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԴՐԱՆՑ  
ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻՑ ԱԶՍՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ  
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2008  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 28-Կ/Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՅՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 18-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 26-ի թիվ 61 որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 618 որոշման 2-րդ կետին համապատասխան՝

### ՀՐԱՄԱՑՈՒՄ ԵՄ

1. Հաստատել պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում դրանց վարձակալների վարձավճարից ազատվելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2008 թվականի հուլիսի 3-ի «Համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարձակալված վարելահողերը սև

ցելի տակ թողնվելու դեպքում վարձակալական վճարից ազատման արտոնության կիրառման կարգը հաստատելու մասին» N 28-Կ/Ն հրամանը:

3. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Ա. Գալստյանին՝ սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

**Ա. ԽԱՉԱՏԻՅԱՆ**

## ԿԱՐԳ

### ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԸ ՍԵՎ ՑԵԼԻ ՏԱԿ ԳՏՆՎԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԴՐԱՆՑ ՎԱՐՁԱԿԱԼՆԵՐԻՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻՑ ԱԶԱՏՎԵԼՈՒ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարելահողերը սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում դրանց վարձակալներին վարձավճարից ազատելուն ուղղված միջոցառումների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող վարելահողերի սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում դրանց մակերեսների ճշտման, մշակության ու խնամքի ընթացքի վերահսկման համար ստեղծվում է հանձնաժողով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնի պետի գլխավորությամբ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնի մասնագետների և տարածքային գյուղատնտեսների մասնակցությամբ:

3. Միջոցառումների իրականացման գործընթացում ներգրավված պետական կառավարման մարմինները իրականացնում են հետևյալ միջոցառումները՝

1) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջանների վարչակազմերը՝

ա. վարձակալներից ընդունում են սև ցելի մշակության և խնամքի մասին դիմումները, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման վկայականների և վարձակալների անձնագրերի պատճենները,

բ. յուրաքանչյուր տարի մարտի 1-ին և հուլիսի 1-ին նախարարություն են ներկայացնում տեղեկություններ՝ նշելով վարձակալների անունները, ազգանունները, հայրանունները, սև ցելի տակ մշակված տարածքների մակերեսները և գտնվելու վայրերը:

2) հանձնաժողովը՝

ա. վարելահողերը սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում առնվազն երկու անգամ՝ մարտ և հուլիս ամիսներին, տեղում ճշտում է սույն կարգի 3-րդ կետի 1-ին ենթակետի

բ պարբերությունում նշված տարածքների մակերեսները և ստուգում է դրանց մշակության ու խնամքի ընթացքը,

բ. յուրաքանչյուր ստուգայցի արդյունքներով կազմում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի անդամների և համապատասխան վարձակալների կողմից,

գ. արձանագրությունները մինչև հաշվետու տարվա հուլիսի 30-ը ներկայացնում է համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարին:

4. Համապատասխան շրջանի վարչակազմի ղեկավարը՝ հիմք ընդունելով սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետի գ պարբերությունում նշված արձանագրությունները, հնգօրյա ժամկետում ընդունում է որոշում՝ հաշվետու տարում համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության վարելահողերը սև ցելի տակ գտնվելու ժամանակահատվածում դրանց վարձակալներին վարձավճարից ազատելու կամ համապատասխան հիմնավորումներով դիմումները մերժելու մասին:

5. Վարձակալներին վարձավճարից ազատելու մասին որոշումը կազմվում է երեք օրինակից՝ մեկ օրինակ հիմնավորող փաստաթղթերի հետ պահվում է համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժնում, երկրորդ օրինակը տրվում է վարձակալին, երրորդը՝ ներկայացվում է նախարարություն:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

**ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

**Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**